«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ՝ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ ԿՐԵԱՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՌԱՐԿԱ՝ ԱՆԳԼԵՐԵՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆԱՀԻԴԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Վ. ԹԵՔԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 92 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...…….…...3

ԳԼՈՒԽ 1.

1. Կրեատիվ ուսուցումը օտար լեզվի դասավանդման ընթացքում.....….5

1.1 Ուսուցչի մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները

1 . 2 Ուսումնական նպատակների ճանաչողական ոլորտ

ԳԼՈՒԽ 2.

2. Անգլերենի ուսուցման ստեղծարար ձևեր և մեթոդներ…….....……17

2.1 Սահիկաշարեր

2.2 Ուսուցողական խաղեր

2.3 Նախագծային աշխատանք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....….…….21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...…..…..23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Այժմ բոլոր ոլորտներում, այդ թվում նաև կրթական համակարգում, գիտական ու տեխնիկական առաջընթացով պայմանավորված, շարունակական կերպով տեղի են ունենում արդիականացման գործընթացներ, որոնց հիմնական նպատակն է համակարգել հնարավոր բոլոր ռեսուրսները՝ տեխնոլոգիական, մարդկային՝ դրանք ծառայեցնելով կրթական նոր ու արդիական որակների ապահովմանը: Կրթական բարեփոխումների առանցքում կրթության առաջնային խնդիր է հանդիսանում վերարժևորել սովորողների գործառույթներն ու պարտականությունները՝ հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները: Եթե խորհրդային դպրոցում սովորողն իր ցանկությունների ու ձգտումների մեջ առավել քան կաղապարված էր՝ հաշվի առնելով տվյալ կրթական համակարգին բնորոշ առանձնահատկությունները, ապա այսօրվա սովորողն այդ տեսանկունից առավել ազատ է: Այսօրվա երեխաներին ընձեռված է նորարական ծրագրերով և տեխնոլոգիաներով կրթվելու հասանելիությունը և հնարավորությունը: Նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը կրթական համակարգ հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքի անմիջական նախագծողը, և արդյունքում բուն դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է, իսկ այդ մոտիացիայի պատճառներից մեկն էլ աշակերտակենտրոն ուսուցումն է: Հարկավ, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերարժևորում: Նմանօրինակ բարեփոխումները մեծապես խթանում են սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացմանը, ինչպես նաև ստեղծագործ մտածելու ու գործելու կարողությանը:

Իսկ այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը: Ինչն էլ հանդիսանում է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել անգլերենի դասաժամերին կրեատիվ ուսուցման առանձնահատկությունները:

<u>Հետազոտության խնդիրները:</u> Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ *խնդիրները* ՝

- Ներկայացնել կրեատիվ ուսուցումը օտար լեզվի դասավանդման ընթացքում:
- Ուսումնասիրել ուսումնական նպատակների ճանաչողական ոլորտը:
- Իրականացնել անգլերենի ուսուցման ստեղծարար ձևեր և մեթոդներ:

ԳԼՈՒԽ 1.

1.1. Կրեատիվ ուսուցումը օտար լեզվի դասավանդման ընթացքում

Այսօր օտար լեզվի ուսուցման մեջ ուշադրության կենտրոնում են երեխայի անհատականությունն ու ներաշխարհը: Ահա թե ինչու օտար լեզու դասավանդող ուսուցչի խնդիրը կայանում է ուսումնական գործընթացի ձևի և մեթոդների ճիշտ ընտրությանը մեջ, որոնք օպտիմալ կերպով կզարգացնեն յուրաքնչյուր սովորողի անհատականությունը: Ուսուցիչը պարտավոր է ակտիվացնել յուրաքանչյուր սովորողի ենթագիտակցական գործունեությունը, ստեղծելու պայմաններ տիրապետելու պրակտիկ անգլերենին, ընտչելու ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր աշակերտի ցուցադրելու իր ակտիվությունն ու ստեղծարարությունը[2]:

Եվ ի՞նչ է նշանակում ստեղծարարություն: Creative անգլերենից թարգմանաբար նշանակում է ստեղծարար, ստեղծագործ, տարբերվող նորի ստեղծումով և փնտրումով:

Այս ամենից ելնելով՝ նպատակ է դրվել ստեղծելու ստեղծարար իրավիճակներ սովորողների ներքին մոտիվացիայի և ճանաչողական հմտությունների զագացման համար՝ ապահովելով դասավանդվող նյութի լիարժեք յուրացում: Նպատակն իրականացնելու համար առանձնացվել եմ հետևյալ խնդիրները:

Հայաստանի կրթական համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետությամբ է մեծապես պայմանավորվածմեր երկրի ապագա զարգացմանը: Կրթական բարեփոխումների խելամիտ իրականացումը և արդյունքներն էլ ավելի կարևոր են եթե հաշվի առնենք, որ դրանք լավ չկազմակերպելու դեպքում Հայաստանի ապագան լրջորեն կվտանգվի եթե կրթական բարեփոխումների արդյունքում չձևավորվի արժեքավոր մարդկային կապիտալ, որը կկարողանա զարգացնել երկրի տնտեսությունը: Բաց և ճկուն ուսումնական ծրագրերը և հմուտ ուսուցիչները կարևոր են դպրոցների զարգացման համար: Շատ կարևոր է, որ ուսումնական ծրագրերը լինեն բավարար չափով ճկուն և ուսուցիչներին տրվի դրանք երեխաների անհատական կարիքներին համապատասխանեցնելու լուծումներ գտնելու հնարավորություն, որպեսզի

յուրաքանչյուր երեխա ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Ուսուցումը պետք է խթանի ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը[1]:

1.1 Ուսուցչի մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները

Ուսուցումն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչներին անհրաժեշտ են մի շարք մասնագիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Համադրելով տարբեր մոտեցումները՝ կարող ենք առանձնացնել ուսուցչի հետևյալ մասնագիտական կարողությունները. (սխեմա 1).



Սխեմա 1

1. Առարկայական գիտելիքները որևէ բնագավառի փաստերն ու տվյալներն են, սահմանումները, սկզբունքներն ու կանոնները: Առարկայական գիտելիքները ներառում են նաև գիտելիքներ միջառարկայական կապերի վերաբերյալ:
2. Ուսուցչի շփումը սովորողների, նրանց ծնողների, իր գործընկերների հետ հենց հաղորդակցություն է: Հետևաբար ուսուցիչը պետք է կարողանա արդյունավետ հաղորդակցվել, այն է. դասարանում ստեղծել անկաշկանդ միջավայր, որտեղ յուրաքանչյուր երեխա կարող է ազատ իր կարծիքն արտահայտել, ստանալ

քաջալերանք իր հնարավորություններն իրագործելու համար և աջակցել մյուսներին:

3. Սովորաբար տարբերում ենք դասավանդման երեք հիմնական ռազմավարություններ՝
   - **Ակտիվ ուսուցման ռազմավարությունն** ապահովում է սովորողների ակտիվ մասնակցություն՝ քննարկումներ, խմբային աշխատանք, համագործակցություն, ռեֆլեքսիա և սովորողներին անհրաժեշտ աջակցություն իրենց ուսումնական նպատակներին հասնելու ընթացքում:
   - **Կոգնիտիվ ռազմավարությունն** օգնում է սովորողների քննադատական մտածողության զարգացմանը, մտքերի փոխանակմանն ու խնդիրների լուծմանը, որոշումների կայացմանը:
   - **Դիրեկտիվ ռազմավարության** դեպքում ակտիվ դերում հանդես է գալիս ուսուցիչը, ով սահմանում է սովորողների կրթական նպատակները և փոխանցում փաստերն ու տեղեկատվությունը:
4. Լինել արդյունավետ դասավանդող, նշանակում է նաև դրսևորել մտածելու կարողություններ, ամենից առաջ մտածել քննադատաբար և իրականացնել սեփական գործունեության վերլուծություն՝ ռեֆլեքսիա:

   Քննադատաբար մտածել նշանակում է տեղեկատվությունը, գիտելիքը քննարկել բազմակողմանիորեն, վերլուծել այն, համեմատել, ձևափոխել, արդյունքում գալ որոշակի դիրքորոշման, ընդունել կամ ժխտել այն:
5. Որպես կանոն, հմուտ ուսուցիչները սահմանում են բարձր նպատակներ և պլանավորում դրանց հասնելու քայլերը: Նրանք նաև զարգացնում են հաջողության յուրահատուկ չափանիշներ:
6. Սովորողի կարիքներին համապատասխան դասավանդման կարողություններ: Ուսուցիչներն օգտագործում են տարբեր բարդության, բնույթի հանձնարարություններ, անհատապես աշխատում յուրաքանչյուրի հետ:
7. Դասարանի կառավարում: Ուսուցիչները սովորաբար ստեղծում են միջավայր սովորելու համար: Դրա համար պետք է ունենան լավ ռազմավարությունների ցանկ, ստեղծեն կանոններ, կազմակերպեն սովորողների խմբային աշխատանքը,

մշտադիտարկեն դասարանի ակտիվությունը, ապահովեն կարգապահություն՝ կանխելով անցանկալի վարքի դրսևորումները:

Ինչպես ձևակերպել ուսումնական նպատակներ[2]

Յուրաքանչյուր դասի արդյունավետության և հաջողության գրավականը ամենից առաջ պայմանավորված է ուսումնական նպատակների ճիշտ սահմանմամբ և դրանց իրականացմամբ: Եկեք քննարկենք, թե ինչ ենք հասկանում «ուսումնական «նպատակներ» ասելով և ինչպես են դրանք ձևակերպվում:

Ուսումնական նպատակները սահմանվում են ուսուցչի կողմից յուրաքանչյուր դասի համար: Դրանք դասի ավարտին սովորողների գրանցած ձեռքբերումներն են, նրանց ուսումնառության արդյունքները. գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, արժեքային համակարգի բաղադրիչներ: Այստեղ կարևորը սովորողների կողմից գիտելիքների և կարողությունների կիրառումն է, այն փոփոխությունները, որոնք նկատվում են նրանց վարքում և վերաբերմունքում: Ուսումնառության այս արդյունքները ուսուցիչը նախապես ձևակերպում է և դրանցով առաջնորդվում դասը պլանավորելիս, ողջ դասի ընթացքում:

Ուսումնական նպատակները սահմանելիս ուսուցիչը պետք է՝

1. առաջնորդվի առարկայի չափորոշչային պահանջներով և ծրագրով,
2. ուսումնական նպատակը ձևակերպի սովորողի տեսանկյունից՝ մտքում ունենալով սովորողների ուսումնառության արդյունքները, փոփոխություններն ու տեղաշարժերը նրանց վարքում,
3. ուսումնական նպատակներում ընդգրկի ինչպես գիտելիքների, այնպես էլ հմտությունների, կարողությունների և արժեքային համակարգի բաղադրիչներ,

4. ուսումնական նպատակները սահմանի այնպես, որ հնարավոր լինի չափել սովորողների ուսումնառության արդյունքները, փոփոխությունները նրանց վարքում. նպատակները պետք է լինեն կոնկրետ և չափելի, ընկալվեն միանշանակ:

Ուսումնական նպատակները սահմանելիս տարբեր մասնագետներ տարբեր ոլորտներ են առանձնացնում: Անդրադառնանք Բենջամին Բլումի (Bloom, 1956) և նրա գործընկերների (Anderson, Krathwohl, 2001) կողմից ներկայացրած դասակարգմանը, որը հայտնի է որպես «Ուսումնական նպատակների տաքսոնոմիա[5]»:

Նրանք առանձնացնում են ուսումնական նպատակների 3 ոլորտ

1. Ուսումնական նպատակների ճանաչողական ոլորտ:
2. Ուսումնական նպատակների հոգեշարժողական ոլորտ:
3. Ուսումնական նպատակների հուզական ոլորտ:

Ուսումնական գործընթացում ուսումնական նպատակների բոլոր այս երեք ոլորտներն էլ այս կամ այն չափով դրսևորվում են: Այդուհանդերձ, տեսական պարապմունքներն ավելի շատ անդրադառնում են ուսումնական նպատակների ճանաչողական ոլորտին ու ակնկալում են դրան համարժեք վարքագծային դրսևորումներ, իսկ գործնական պարապմունքների ժամանակ առավել շեշտադրվում են նպատակների հոգեշարժական ոլորտն ու սովորողների՝ դրան համարժեք վարքագծային դրսևորումները:

Առավել մանրամասն եկեք անդրադառնանք ուսումնական նպատակների ճանաչողական ոլորտին:

1.2 Ուսումնական նպատակների ճանաչողական ոլորտ

Այստեղ մենք գործ ունենք, գիտելիքների մտապահման, մտավոր հմտությունների և ունակությունների հետ: Ուսումնական նպատակների այս ոլորտը Բ. Բլումի կողմից ներկայացվում է մտավոր գործունեության աստիճանական զարգացման՝ տաքսոնոմիայի (աստիճանակարգի) տեսքով՝[4]

- ✓ 1-ն աստիճան՝ փաստերի, հասկացությունների և սկզբունքների մասին գիտելիքներ,
- ✓ 2-րդ աստիճան՝ սկզբունքների, կանոնների իմաստավորում և ըմբռնում,
- ✓ 3-րդ աստիճան՝ կանոնների, հասկացությունների և օրենքների կիրառում,
- ✓ 4-րդ աստիճան՝ սկզբունքների, ընթացակարգերի և գործընթացների վերլուծություն,
- ✓ 5-րդ աստիճան՝ համադրում՝ տարբեր գիտելիքների միջև կապերի ստեղծում,
- ✓ 6-րդ աստիճան՝ գնահատում ըստ արժեքների մասին չափանիշների կամ պատկերացումների:

Բլումը սահմանում է նաև սովորողների կոնկրետ գործողությունները՝ ներկայացված մակարդակներին համապատասխան: Այդ գործողությունները նա սահմանում է որոշակի բայերի միջոցով (սխեմա 2):



Սխեմա 2

Աշակերտների ստեղծագործական կարողությունների օգտագործումը առաջատար է, քանի որ հենց այդպիսի գործունեությունն է առաջացնում անկախություն, գործունեություն և թիմում հաղորդակցվելու ունակություն: Ինչպես ցույց է տալիս անգլերենի դասերին ստեղծագործական կիրառման պրակտիկան, այն օգնում է ուսանողին ցույց տալ իրենց ունակությունները, որոնց մասին երբեմն ինքը՝ ուսանողը, չգիտեր:

Որպեսզի աշակերտը կարողանա հաջողությամբ զբաղվել ստեղծագործական գործունեությամբ, անհրաժեշտ են որոշակի պայմաններ:

Նախ, ուսուցիչը ինքը պետք է լինի ստեղծագործող մարդ, որպեսզի իմանա, թե որ ուղղությամբ է աշխատելու աշակերտների հետ:

Երկրորդ, ուսուցչի դրական վերաբերմունքը աշակերտների հետ կապ հաստատելու համար:

Երրորդ, ստեղծագործական առաջադրանքները պետք է համապատասխանեն սովորողների պատրաստվածության մակարդակին և տարիքին:

Չորրորդ՝ չափավոր օգտագործել անհրաժեշտ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, քանի որ նույնիսկ անգլերեն սովորելիս աշակերտները կարող են ստեղծագործական արտադրանք ստեղծել իրենց ձեռքերով:

Հինգերորդ՝ ուսուցչի մասնակցությունը ստեղծագործական արտադրանքի ստեղծմանը պետք է լինի նվազագույն, քանի որ երեխան պետք է փորձի ինքնուրույն անցնել իր ստեղծագործության ստեղծման բոլոր փուլերը:

Վեցերորդ՝ աշակերտները պետք է վստահ լինեն իրենց գործունեության լավ արդյունքի վրա: Որովհետև ստեղծագործությունը չպետք է որևէ այլ արդյունք ունենա:

Ստեղծագործական տարրերի գործնական կիրառումը, ստեղծագործական դասերի և արտադասարանային գործունեության անցկացումը նպաստում է անգլերենի ուսուցման և աշակերտների ինքնադաստիակաության նկատմամբ հետաքրքրության զարգացմանը: Հետևաբար, ստեղծագործական գործունեության օգտագործումը պետք է սկսվի տարրական դպրոցից և դիտվի տվյալ ուսումնական հաստատությունում անգլերեն սովորելու ամբողջ ընթացքում[3,5]:

Ուսումնառության և արտադպրոցական գործունեության ձևերը կարող են բազմազան լինել, բայց նպատակը բոլորի համար մեկն է՝ յուրաքանչյուր աշակերտի հաջողությունը: Աշակերտների ստեղծագործական գործունեությունն է՝

1. պատմվածքներ գրել,
2. շարադրությունների մրցույթ,
3. նամակ,
4. հեքիաթների հորինում,
5. աշակերտների գծանկարներ՝ մենախոսություններ և երկխոսություններ կազմելու համար,

6. հետազոտական աշխատանք,
7. ստեղծագործական աշխատանքների կազմման համար համակարգչային ծրագրերի օգտագործումը,
8. խաղեր, գիտաժողովներ,
9. հարցազրույց,
10. նախագծեր,
11. էքսկուրսիաների կազմակերպում (դասերի անցկացում դասարանից և դպրոցից դուրս),
12. արհեստներ:

Գործնականում այս գործողություններն ունեն իրենց կրթական նպատակներն ու խնդիրները, սակայն արդյունքը լեզվի ինտենսիվ պրակտիկան է:

Ցանկացած տարիքում երեխաները սիրում են ստեղծագործել, հորինել, երևակայել, ուստի շատ աշակերտների համար հեքիաթներ գրելը սիրված զբաղմունք է: Հեքիաթներ, էսսեներ, տառեր անգլերեն գրելը զարգացնում է բառապաշարային և քերականական գիտելիքներ, խոսքի գործունեության բոլոր տեսակների հմտություններ և կարողություններ, իսկ հեքիաթներ կարդալն օգտակար է ցանկացած տարիքում, քանի որ դրանք սովորեցնում են բարություն, ընկերասիրություն, սեր հայրենի մշակույթի նկատմամբ, օգնում են ավելի լավ ճանաչել այլ երկրների ավանդույթները:

Աշակերտները կարող են ոչ միայն գրել իրենց հեքիաթները, այլև հանդես գալ արդեն իսկ գոյություն ունեցող հայտնի ստեղծագործությունների վերաբերյալ իրենց սյուժեներով:

Պետք է նշել, որ եթե աշակերտներն ինքնուրույն գրավոր կատարում են առաջադրանքները, ապա այս արդյունավետ մեթոդը ստիպում է երեխաներին բառարանում գտնել բառերի ճիշտ ուղղագրությունը, ինչը նշանակում է, որ նրանք ավելի գիտակցաբար կհիշեն բառերի ուղղագրությունը, թարգմանությունը և բառի իմաստը: Նման գործողությունները նպաստում են երեխաների մոտ մտածողության, հիշողության և ուշադրության զարգացմանը:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծագործական աշխատանքների ստեղծմանը ուսանողների ներգրավումը

հետաքրքիր է դարձնում ուսուցման գործընթացը, ընդլայնում է գիտելիքները թեմայից դուրս, կրթական գործընթացը դարձնում դինամիկ և գրավիչ, երեխաները հաճույք են ստանում իրենց աշխատանքից: Ցանկացած տարիքի աշակերտները կարող են ստեղծագործական արտադրանք ստեղծել `օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները[11]:

Ուսանողների հետազոտական գործունեությունը ստեղծագործական գործունեության այն տեսակն է, որը մեծ հնարավորություններ է տալիս նրանց փորձել իրենց երիտասարդ գիտնականների դերում: Այս տեսակի գործունեությունը ձևավորում է գործնականում ընդհանրացնելու, համակարգելու, տեսությունը կիրառելու և հետազոտության արդյունքներ ստանալու ունակությունը: Հետազոտական գործունեությամբ զբաղվող աշակերտները ձեռք են բերում հաղորդակցության, հրապարակային խոսքի, հետազոտական հմտություններ, սովորում են վերլուծել և ամփոփել ստացված տեղեկատվությունը:

Օրինակ՝ «Անգլիական ժողովրդական հեքիաթներ» հետազոտական աշխատանքում տարրական դասարանների աշակերտները լուծեցին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են.

- վերլուծել անգլիական ժողովրդական հեքիաթների առանձնահատկությունները.
- հաստատել անգլիական ժողովրդական հեքիաթների ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները «Թոմ բթամատը» ժողովրդական հեքիաթի անգլերեն օրինակում.
- տարրական դասարանների աշակերտների շրջանում անցկացնել ուսումնասիրություն ժողովրդական հեքիաթների (անգլերեն) գիտելիքների վերաբերյալ:

Տարբեր թեմաների վերաբերյալ հետազոտական աշխատանքների իրականացումը աշակերտներին հստակ ցույց է տալիս անգլերեն լեզվի կարևորությունը որպես միջոց, զգալիորեն ընդլայնում է ելակետային լեզվի երկրի մասին գիտելիքները, ուստի նպաստում է այն սովորելու մոտիվացիայի բարձրացմանը:

Մենախոսություն կամ երկխոսություն կազմելու համար նկարչության այսպիսի մեթոդի օգտագործումը զարգացնում է երևակայությունը, ինչպես նաև հնարավորություն է տալիս աշակերտներին ցույց տալու այլ դասերից կամ անձնական փորձից ստացած իրենց գիտելիքները[9]:

Այս աշխատանքը կարող է կազմակերպվել անհատապես, զույգերով և խմբերով: Նկարները կարող են փոխանակվել, իսկ հետո պատմությունը պատմվում է երրորդ դեմքից: Գծագրերը կարող են նկարվել տանը կամ դասարանում՝ նախապես ընտրելով բառագիտական և քերականական նյութ, և նկարի հիման վրա առաջադրանքներ կատարելով.

I can see a (mouse, fox, giraffe). It/ is/ lives in/on a/the (house, river, Zoo). (նկար 1);

I can see a (lion, dog, tiger). It/ is/ lives in/on a/the (sea, forest, Zoo). (նկար 2)

(նկար 1)

(նկար 2)

Դասարաններից և դպրոցից դուրս էքսկուրսիաների կազմակերպումը թույլ է տալիս աշակերտներին շեղվել ավանդական դասաձևից և արտադպրոցական գործունեությունից, քանի որ ներկան թելադրում է խոսել իրականին մոտ իրավիճակներում:

Դասարաններից դուրս հաղորդակցությունը նպաստում է աշակերտների հաղորդակցման հմտությունների զարգացմանը: Օրինակ, 2 -րդ դասարանում ֆիզիկական կուլտուրայի դաս անցկացնելը «Սպորտ» թեմայով կարող է անցկացվել մարզահրապարակում կամ մարզասրահում: Աշակերտները նախապես ծանոթանում են այս նյութի բառապաշարին, քերականությանը: Աշակերտները կատարում են ֆիզիկական վարժություններ և անգլերենով պատմում, թե ինչ կարող

են անել (I can run, jump), միմյանց հարցեր են ուղղում (Can you play basketball?), կազմակերպում խմբային խաղեր (Let's play football!.):

Բոլոր տարիքի երեխաները սիրում են իրենց ձեռքերով ինչ-որ բան պատրաստել, այսպես կոչված՝ handmade creatures: Ստեղծագործական աշխատանքներ պատրաստելը կարող է կիրառվել անգլերենի դասերին և արտադասարանային գործունեությանը: Նման դասարաններում ուսուցչի դերը օգնական լինելն է, քանի որ երբեմն աշակերտները դառնում են շատ ավելի խելացի և ստեղծագործ, քան ուսուցիչը:

Նման դասեր անցկացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն պատրաստել որևէ բան, այլ հասկանալ դրա նպատակը և կիրառումը: Կարևոր է հիշել, որ բոլոր գործողությունները պետք է մեկնաբանվեն անգլերեն լեզվով (բառապաշարի նյութը կախված է ուսումնասիրության մակարդակից):

Օրինակ՝ ամանորյա տոներին պատրաստվելը: Դուք կարող եք մեծ թվով տարբեր իրեր պատրաստել, քանի որ դա երեխաների և մեծահասակների համար ամենասիրված տոնն է: Ուսուցիչը առաջարկում է աշակերտներին կատարել ընտրություն և հիմնավորել այն:

Իրեր պատրաստելու համար կարող եք վերցնել երկու դասաժամ: Առաջին դասին տեղի է ունենում սովորողների հետագա աշխատանքի քննարկում: Երկրորդ դասին, իրեր պատրաստելու ընթացքում, երեխաները կազմում են պատմվածք կամ բանաստեղծություն, տալիս հարցեր, կիսվում դասի համար պատրաստած տեղեկություններով, կարծիքներ փոխանակում և ամփոփում իրենց գործունեությունը:

Օրինակ՝ 4 -րդ դասարանի աշակերտները ձայների մեծամասնությամբ որոշեցին, որ դա լինելու է « Christmas Angel » (Սուրբ Ծնունդի հրեշտակ): Բոլորը միասին որոշեցին կազմել իրենց աշխատանքի ծրագիրը.

- բաժանվել խմբերի,
- գտնել տեղեկատվություն,
- պատրաստման համար նյութ ընտրել,
- - գրել իրեր պատրաստելու հերթականությունը անգլերեն լեզվով,
- - ներկայացնել ձեր աշխատանքը:

Անգլերենի դասերին ուսանողների ստեղծագործական գործունեության օգտագործումը, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ունի միայն դրական միտումներ: Աշակերտները մշտապես ընդլայնում են իրենց գիտելիքները ուսումնասիրվող լեզվի երկրների մշակույթի, ինչպես նաև հայրենի երկրի մշակութային ժառանգության մասին, բարելավում են առարկայի վերաբերյալ իրենց գիտելիքները, ինչը թույլ է տալիս աշակերտներին ավելի վստահ լինել անգլերեն լեզվի օգտագործման մեջ դասարանում և այլ իրավիճակներում[10]:

ԳԼՈՒԽ 2.

2. Անգլերենի ուսուցման ստեղծարար ձևեր և մեթոդներ

- ✓ Սովորողների համար ստեղծել հարմարավետ պայմաններ, համագործակցության մթնոլորտ, փոխադարձ վստահություններեխաների միջև, ինչպես նաև երեխաների և ուսուցչի միջև:
- ✓ Ձևավորել սովորողի անձնային վերաբերմունքը ուսման հանդեպ, հաջողության հասնելու ցանկություն առհասարակ, ինչպես նաև տվյալ պահին:
- ✓ Պլանավորել ուսուցման տեսակներ ուսուցման ընթացքում ծրագրային գիտելիքների կիրառմամբ:
- ✓ Մոդելավորել մանկավարժական իրավիճակներսովորողների ստեղծարարությունը զարգացնելու համար:
- ✓ Ուսուցումը պետք է կառուցվի այնպես, որ սովորողներն իրենք բնական կերպով զգան ստեղծարար գործունեությանը ներգրավվելու անհրաժեշտությունը:

Նպատակներն իրագործելու համար օգտագործենք ուսուցման հետևյալ ստեղծարար ձևերը[6]՝

- սահիկաշարեր,
- բանաստեղծություններ, երգեր, հանգավորում,
- ուսուցանող խաղեր,
- նախագծային գործունեություն:

Գործունեության ընթացքում օգտագործվում է ուսուցման ստեղծարար մեթոդներ՝

- քննարկումներ,
- խոսելու հմտությունները զարգացնող միջոցներ,
- թեստային աշխատանքներ,
- թեմատիկ սահիկաշարեր, որոնք օգտագործվում են սովորողների մոտ ինքնուրույն աշխատելու հմտությունը զարգացնելու համար:

Դասին պատրաստվելիս պետք է հիշել, որ սովորելուն ուղղված ջանքերը հետաքրքիր են, եթե դրանք բազմազան են: Ոչինչ այնքան ձանձրալի չէ, որքան

միօրինակությունը։ Ահա թե ինչու պետք է օգտագործել տարբեր ստեղծարար մեթոդներ և ձևեր՝ կիրառելով առանձնացված մոտեցում՝

- նոր ուսումնական նյութի ուսումնասիրման դաս,
- գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման դաս,
- համակարգման և ընդհանրացման դաս,
- համակցված դասեր,
- ինտեգրացման դասեր,
- վերահսկման և շտկման դասեր,
- ինչպես նաև դասերի ոչ ավանդական ձևեր,
- դաս-էքսկուրսիա,
- դաս-հարցազրույց,
- դերախաղեր,
- կլոր սեղան կամ կոնֆերանս,
- դաս-մրցույթ, կամ դաս-խաղ,
- երաժշտական դասեր,
- դաս-ստուգարք։

Ժամանակակից լինելու համար օտար լեզվի ուսուցիչը պետք է լինի ժամանակակից և իր ուսուցման մեջ պետք է կիրառի դասավանդման ներ մեթոդներ։ դասագրքով դասի գալը ոչինչ է, պետք է կրակ վառել երեխաների աչքերում, դա է ուսուցչի նպատակը, բայց ինչպես դա անել։ Այսօր ուսուցչի պահոցում հայտնվել են նոր գործիքներ, դրանք են՝ ինտերակտիվ գրատախտակը, էլեկտրոնային և թվային ուսումնական ռեսուրսները։ Սրանք բոլորն ուղղված են սովորողին օգնելու նրա ստեղծարար, ճանաչողական գործունեությանը մեջ։

Բնականաբար մենք բոլորս մեր աշխատանքում կիրառում ենք տարբեր ժամանակակից մոտեցումներ։

1. **Սահիկաշարեր** օտար լեզվի ուսուցման մեջ հանդիսանում են հզոր մոտիվացիայի աղբյուր, ընդարձակում են աշխարհայացքը զարգացնում ինքնուրույն աշխատանքի հմտություններ, ինչն էլ հանգեցնում է առաջադիմության և գիտելիքի որակի բարձրացմանը։

2. **Ուսուցողական խաղերը** այժմ օտար լեզվի ուսուցման դասերին պետք է լինեն խաղի տարրեր, մասնավորապես տարրական դասարանում: Ահա թե ինչու խաղերին պետք է տրամադրել կարևոր դեր: Խաղերի ընթացքում երեխաների մոտ ձևավորվում է կենտրոնանալու, ինքնուրույն մտածելու, ուշադրության կենտրոնացման հմտություններ և ձգտում դեպի գիտելիքը: Տարված լինելով խաղով աշակերտները չեն էլ նկատում, որ ընկալում են, հիշում, կողմնորոշվում, հարստացնում են իրենց բառապաշարը: Անգամ ամենապասիվ երեխաներն են սիրով ներգրավվում խաղի մեջ:

   Անգլերենի ժամերին օգտագործվող խաղերը կարող են լինել քերականական, բառապաշարային, հնչյունաբանական և այլն: Խաղերը կարող են նաև ստեղծարար բնույթ կրել: Դրանք դերախաղերն են: Ուսուցչի հիմնական խնդիրն է ստեղծել դասարանում այնպիսի մթնոլորտ, որ երեխաները առավելագույնս ներգրավված լինեն լեզվական միջավայրի մեջ, սովորեցնել աշակերտներին ստեղծարար կերպով օգտագործել խոսքային հմտությունները:

Դերախաղը դա գործունեություն է, երբ աշակերտը իր վրա է վերցնում մեծահասակի դերը, նա ընտրում է և կատարում որոշակի դեր: Առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել դերախաղերին տարրական դասարանում: Այն թույլ է տալիս սովորողների մոտ ձևավորելու հաղորդակցական հմտություններ հատուկ ընտրված, կյանքից վերցված իրավիճակներում:

- ✓ Line up- աշակերտը շտապում է որքան հնարավոր է շուտ զբաղեցնել իր տեղը
- ✓ Strip-story- յուրաքնչյուր աշակերտ ստանում է իր դերը և որքան հնարավոր է շուտ զբաղեցնում իր տեղը շարքում
- ✓ Smile- աշակերտները մոտենում են միմյանց և ժպիտով փոխանակվում ռեպլիկով
- ✓ Merry-go-round- աշակերտները կազմում են շրջան և քայլելով շրջանում փոխանակվում են ռեպլիկով:

Խաղի միջոցով ստեղծվում է բնական հաղորդակցման միջավայր, որն առաջացնում է աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը: Իսկ խաղում առկա մրցակցությունը մարզում է աշակերտների հիշողությունը: Այս ամենը խթանում է ուսուցանվող նյութի յուրացմանը:

3. **Նախագծային աշխատանքը** համակարգչի հայտնվելու հետ, այս աշխատանքը դարձել է էլ ավելի գրավիչ։ Ինտերնետն օգտագործելով նրանք կատարում են գիտակցված որոնողական աշխատանքներ, աշխատելով տեղեկատու գրականության հետ, սովորում են օգտագործել անգլերենը կրթման և ինքնակրթման մեջ[7]։

Վերը նշված ստեղծարար մեթոդների և ձևերի օտար լեզվի դասերին կիրառման արդյունքում մեզ հայողվում է բացահայտել սովորողների ստեղծարար կարողությունները, հետաքրքրություն առաջացնել սովորողների մոտ, գրավել նրանց, սովորեցնել նրանց լինել ավելի վստահ և օգտագործել ձեռք բեռած գիտելիքները տրբեր իրավիճակներում։

Համակարգված և նպատակաուղղված աշխատանքը տվյալ ուղղությամբ թույլ է տալիս հասնելու դրական արդյունքների։

Ժամանակակից ուսուցչի տաղանդը կայանում է նրանում, որ նա կարողանա այնպես հետաքրքրել աշակերտին, որ նա ինքը ցանկանա բացահայտել նորը, լուծել իր առջև դրված խնդիրը, որպեսզի աշակերտն ունենա ինքնավստահություն, ուժ և ստեղծագործելու ցանկություն[8]։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամեն ինչի հիմքում դրված է ազատության գաղափարը: Վստահել երեխային, հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհն անցնելու՝ նպաստում են սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:

Այսինքն՝ ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները ճիշտ և տեղին կիրառելիս կնպաստեն մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչը այսօր արդիական ու խրախուսելի է համակողմանի զարգացած անհատականություն ձևավորելու գործում:

Սույն հետազոտության մեջ հաշվի առնելով ուսումնասիրված թեմայի նպատակներն ու դրանից բխող խնդիրները՝ կատարեցինք հետևյալ եզրահանգումները՝

- ✓ նախաձեռնողականության, ինքնուրույնության ու ստեղծարարության զարգացման գործում առանցքային դեր ունի հանրակրթական ուսումնական հաստատությունը,
- ✓ նախաձեռնողականություն, ինքնուրույնություն ու ստեղծարարություն ունակությունների բնականոն զարգացումը մեծապես կապված է ուսուցչի աշխատանքից՝ դասի պլանավորումից մինչև մեթոդների ու հնարների ընտրությունից,
- ✓ կրթության ոլորտի արդի բարեփոխումները մեծապես նպաստում են սովորողների մեջ հետազոտական ու ստեղծարարության ունակություններ զարգացնելու, ինչպես նաև վերջիններիս դասապրոցեսի մեջ ավելի արդյունավետ ներգրավելուն,
- ✓ անգլերենի դասավանդման շրջանակներում ճիշտ պլանավորված դասի ընթացքը կարող է մեծապես նպաստել սովորողների մոտ գիտելիքների ամրակայումից բացի գործնական կարողություններ ձևավորելուն,

- ✓ անգլերենի դասերին փոխգործուն մեթոդների կիրառումն օգնում է սովորողին լինել ավելի բաց համագործակցության համար, ինչպես նաև նպաստում է նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելուն,
- ✓ անգլերենի դասավանդման ժամանակ հիմնական լեզվական գիտելիքների ստացմանը զուգահեռ սովորողը լայն հնարավորություններ ունի հանդես գալ իր նորարարական գաղափարներով, ինչը հնարավոր է միայն ուսուցչի հետ ճիշտ ու կառուցողական համագործակցության դեպքում,
- ✓ նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը, որոնք նաև ինքնաճանաչման լայն հնարավորություն են տալիս սովորողին, արդի կրթական համակարգի և առհասարակ կյանքի այլ ոլորտների համար պարտադիր բաղադրիչ է, ուստի սովորողը պետք է ունենա բոլոր հնարավորությունները դպրոցում նման ունակություններ ձեռք բերելու և զարգացնելու:

Եվ խոսքս ցանկանում եմ ավարտել Վ.Գ. Բելինսկու հետևյալ արտահայտությամբ՝ «*Առանց նոր բանի ձգտելու՝ չկա կյանք, չկա զարգացում, չկա առաջընթաց*»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սարգսյան Աննա, Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր, https://www.vsu.am/grqer/2018/aprak/sargsyananna.pdf
2. Անանյան Ա., Գործող ծրագրերով և դասագրքերով անհնար է արդյունավետ ուսուցում կազմակերպել, Մանկավարժություն, թիվ 6, 2010
3. Գալոյան Ս., Ֆինլանդիայի հանրակրթական համակարգը, Մանկավարժություն, թիվ 3, 2010
4. Դպրոցական կրթության հասանելիությունը Հայաստանում, Երևան, 2012
5. Մելիքյան, Գ., Գալոյան, Ս. Չափորոշչահեն կրթությունը Հայաստանի Հանրապետությունում, Մանկավարժություն, թիվ 5, 2011
6. Абросимов В.Н. Профессиональные качества преподавателя, стандарты и мониторинг в образовании 2001, No 6, 61- 64 с.
7. Маркова А.К. Психология труда учителя, книга для учителя. Москва: Просвещение, 1993, 192 с.
8. Рогов Е. Н. Учитель как объект психологического исследования. Москва: 1998, 496 с.
9. Сластенин В. А. Формирование личности учителя советской школы в процессе профессиональной подготовки. Москва: 1976, 164 с.
10. Education for All. Global Monitoring Report, 2007, 2009, 2012
11. How the world’s best-performing schools come out on top, McKinsey, 2007